

## ՆՈՐ ՆՍԻՒՋԵԻՆՆԻ ՁԵՌՆԳՐԵՐԸ

(Համառոտ տեսութիւն)

### Ա

Յովսէփ արքեպիսկոպոս Երկաշնաբազուկ Արղութեանի լիշատակով լիքն է Նոր-Նախիջևանը: Ահա փառաւոր տաճարներ, որոնց բոլորի հիմքը դնողը եւ ինքն է եղել, ահա Ս. Խաչ վանքը, որ գլխովին նորա հիմնարկածը, կառուցածը ու օծածն է, ահա Հոգևոր Կառավարութիւնը, որի նախատիպար Հոգևոր դատարանն առաջին անգամ նա է բաց արել, ահա Քաղաքալին վարչութիւնը, որի նախագահափար Հայկական Մագիստրատը նա է հաստատել, ահա, վերջապէս, այն բոլոր հոգևոր սարքն ու կարգը, որ մինչև ցայսօր դեռ անխախտ պահպանուած է քաղաքիս ու դորա շուրջը գտնուած հալ գիւղերի եկեղեցիներում և հոգևորականութեան մէջ, չենք խօսում արդէն այն բաղմամբիւ մանր լիշատակների մասին, որ թողել է հանդուցեալ արհին քաղաքում և որոնք մինչև ցայսօր ամեն մի քալլափոխում լիշեցնում են նորան: Ահա, օրինակի համար, Ս. Խաչ վանքի հարաւալին դրան կողքին պատի մէջ հազցրած գեղեցիկ մարմարիոնեակ տախտակը, որի վրայ մենք կարդում ենք. «Շնորհօքն Աստուծոյ կառուցի զսուրբ Խաչ վանքս և հաստատեցի ի սմա զդպրոցս և զտպարանս ես սանահնեցի Արղութեանց Շիրաբէդի որդի և սուրբ Էջմիածնայ նուիրակ և Ռուսաց երկրի Հալոցս աղգի առաջնորդ Յովսէփ արքեպիսկոպոս ի Կալսերութեան ամենայն ռուստաց Եկատերինէ Ալէքսէովին. Երկրորդի և ի Հալրապետութեան ամենայն Հալոց տեառն Ղուկասու կաթողիկոսին աշխատութեամբ հոգևոր որդուին իմոյս. Բալազիտցի Կարապետ վարդապետին օծեալ եղև լամի տեառն 1791 և ի Հալոց թուին ՌՄԻ Սեպտեմբերիո. ահա Ս. Նիկո-

դպրոս եկեղեցու մէջտեղը զետեղուած մարմարիոն քարը, որի վերայ փորագրուած է. «Կառուցաւ տաճարս աստուածային սըրբոյ Նիկողայոսի հայրապետին հոգեորական արդեամբք լծանդակութեամբ և օծմամբ սրբոյ աթոռոյս Էջմիածնի ծալրագոյն նուիրակ և ռուսաց երկրի ամենայն Հալոց առաջնորդ և նոր քաղաքիս Նախիջևանայ հիմնադիր սանահնեցի Յովսէփ արքեպիսկոպոսին Արղութեանց ի թագաւորութեան մնծին Եկատերինէի երկրորդի Կալսերուհուոն ամենայն ռուսաց ի հայրապետութեան աթոռոյն սրբոյ Էջմիածնի տեսուն Ղուկաս կաթողիկոսին ամենայն Հալոց թվին 1783». ահա և Ս. Աստուածածնի հին պատկերը, որի տակ գրուած է. «Ըս սանահնեցի երկայնաբազուկ Արղութեանց Շիօշբէգի որդի Յովսէփ արքեպիսկոպոս նուիրակ սրբոյ Էջմիածնի առաջնորդ ռուսաց երկրի Հալոց աղգի և հիմնադիր Նոր-Նախիջևանայ նկարել ետու զպատկերս սուրբ Աստուածածնայ և օծեալ նուիրեցի Նորայէն սուրբ Խաչ վանիցն Նախիջևանու 1786 թուին և ի մուտըն Հոկտեմբերի», և այլն և այլն:

Եւ Նախիջևանցիք էլ գնահատել են նորան, սրբութեամբ զարգացնելով ու շարունակելով նորա դրածը, հաստատածը և ամեն բանում պահելով նորա անուան լիշատակութիւնը: Նորա ոսկեղօծ շրջանակի մէջ առած պատկերը կախուած է Քաղաքային վարչութեան դահլիճում Եկատերինէ Կալսերուհու պատկերի մօտ, նորա նոյն մեծադիր պատկերներից մէկն էլ կախուած է Ս. Խաչի նախկին ժառանգաւորաց դպրոցի սրահում Յարութիւն վարդապետ Ալամդարեանի պատկերի մօտ, նորա վեղարադարդ զլուխը քանդակուած է Ս. Լուսաւորիչ մայր եկեղեցու առաջ նորերումս կանգնեցրած Եկատերինէի շքեղ արձանի պատուանդանի վերայ:

Բայց ամենամեծ լիշատակը, որ հանգուցեալ արհին թողել է Նոր-Նախիջևանում, մեր կարծիքով, այն գրչագիր գրքերի հաւաքածուն է, որ խնամքով ժողովել, կաղմել և ժառանգութիւն է թողել մեզ-լեանոցս: Մենք ասում ենք ամենամեծ լիշատակը ոչ թէ նորա համար, որ մի ամբողջ քաղաքի հիմնարկութիւնը, հինգ փառաւոր տաճարների շինութիւնը, վանքի հիմնարկութիւնը, Հողևոր դատարանի և Մազիստրատի հաստատութիւնն աւելի փոքր լիշատակներ են, քան թէ մի ձեռագրերի մատենադարան կաղմելը, ոչ, այլ որովհետև քաղաքն առանց նորան էլ կը հիմնարկուէր, եկեղեցիներն ու

վանքն առանց նորա էլ կը կառուցուէին, Հոգևոր դատարանն ու Մաղխարատն առանց նորան էլ կը հաստատուէին, բայց ձեռագրերը կարող էին չը հաւաքուել, չը պահպանուել, կարող էին սորա-նորա ձեռքին ցրուած մնալ և ցեղի, մկների կերակուր դառնալ, փոշու ու խոնաւութեան մէջ փոտել և այդպիսով կորստեան մատնուել, ինչպէս կորստեան են մատնուել ու փծացուել հալկական բազմաթիւ այդ տեսակ հարստութիւնները:

Դորա համար պէտք էր ձեռագրերի արժէքի գիտական հասկացողութիւն, որ այն ժամանակները հազարից մէկը չունէր, դորա համար հարկաւոր էր հալկական հնութեան, զեղարուեստի գնահատութիւնը, որ այն ժամանակները մեր մէջ ճրագով էլ որոնուէր, չէր գտնուիր: Ճիշտ է, բոլորեքեան էլ այն ժամանակները գնահատում էին հոգևոր բովանդակութիւն ունեցող ձեռագրերը, սրբութեամբ պահպանում էին նոցա, բայց այդ գնահատութիւնն ու սրբութեամբ պահպանելը նոցանով ըրժշկուելուց և բազմաթիւ թաշկինակների ու լաթերի մէջ նոցա փաթաթելուց ու տների խոնաւ անկիւններում պահելուց հետո չէր գնում: Պէտք էր Յովսէփ արքեպիսկոպոսի պէս մարդու խելացի հեռատեսութիւնը, որ մի կողմ թողած նոցա սրբութիւնը, որ սակայն չէր աղատում նոցա կորչելուց, գիտական նպատակներով Հայոց գիտութեան ու զեղարուեստի այդ անկման ժամանակներում մեծ աշխատանքով հաւաքուէին նոքա, սորա-նորա ձեռքից խլուէին, որոշուէին նոցա արժէքը և իբրև մի թանկագին գանձ պահուէին ապագայի համար:

Այդ ձեռագիր մատեանների հաւաքածուն, որի ահագին մեծամասնութիւնն այժմ պահուում է ս. Լուսաւորիչ եկեղեցում, իսկ փոքր մասը ցրուած է քաղաքի և գիւղերի եկեղեցիներում, առաջին անգամ հաւաքուել ու կարգի է բերուել Նոր-Նախիջևանի հիմնարկութեան ժամանակ 1780 թուին:

Երջանկալիչատակ Յովսէփ արքեպիսկոպոսն այդ թուին Պետերբուրգից, ուր գնացել էր նա այնտեղի եկեղեցին օծելու և աշխատելու նախիջևանցոց արտօնութեան հրովարտակը ստանալու համար, ժամանելով Նոր-Նախիջևանի հիմնարկութեան համար նշանակուած տեղը և ձեռնարկելով քաղաքի հիմնարկութեան գործին, ի միջի ալլոց, ուշադրութիւն է դարձնում և Ղրիմից բերած եկեղեցական իրեղէնների զերալ, որոնք արկղարկվ պահուում էին զանազան մարդկանց մօտ:

Նա հրամայում է բերել իւր մօտ արկղները, բաց է անում նոցա իշխանների ներկայութեամբ, խնամքով ցուցակադրում է և պահում է նոցա մի առանձին շինութեան մէջ, որ զգեստատուն» կամ «հանդերձատուն» անունով նա լատկապէս հէնց զորս համար շինել է տալիս, մինչև որ կառուցուէին եկեղեցիները, որ նա արդէն ծրագրել էր, և իրեղէնները տեղադրուէին նոցա մէջ <sup>1)</sup>։ Ահա հէնց այդ ժամանակ նա կարգի է բերում և ձեռագրերը, որոնք միւս իրեղէնների հետ միասին բերուել էին Ղրիմի զանազան քաղաքների եկեղեցիներից— կաֆալի Երաշխուտը սուրբ Աստուածածին վանքից, ս. Սարգիս, ս. Աստուածածին, ս. Օղսէնդ, ս. Յակոբ, ս. Հրեշտակապետ, ս. Յովհաննէս Աւետարանիչ, ս. Խաչ, ս. Լուսաւորիչ, Դարի ս. Նիկողայոս, ս. Համբարձում, ս. Թորոս, ս. Գէորդ, ս. Յարութիւն, ս. Ստեփաննոս, վերի ս. Նիկողայոս, ս. Յովհաննէս եկեղեցիներից, Բաղչիսարալի ս. Լուսաւորիչ եկեղե-

<sup>1)</sup> Ղրիմի եկեղեցիներից բերած զանազան եկեղեցական իրեղէնների և ժամանակաւոր «Ձգեստատուն» շինելու մասին հաւաստի տեղեկութիւններ մենք դանում ենք Յովսէփ արքեպիսկոպոսի ձեռագիր «Դաւթար»-ում։ «Ժողովուրդքն մեր որք ելեալք են ի Ղուիմու, բերեալ էին ընդ ինքեանս, զամենայն արծաթեղէն և զշորեղէն անօթնս վանօրէից և եկեղեցեաց, զրուած է այդ մասին Դաւթարի 11 երեսում, զոր մեք մեծա տառապանօք և վշտօք ի բազում աւուրս աշխատեալ մերանովքն, արկաք ի դաւթար անուամբ վանօրէիցն, եկեղեցեացն, և որոց աշխատութեամբ բերեալ էին, և հաղիւ թէ՛ շինեալ զգեստատուն տեղաւորեցաք ի նմա։ և զայս զեֆթերս պատմութեամբ, դրեցաք ի սմա զամենայն, որպէս զի՛ մի ինչ կորիցէ և ապագայն դիտացեն զորքանութիւն բերեցեալ անօթիցն և զմերս ջանք և տաժանելի վատակք զի ապագալիցն ըղձալիք են անցելոցն պատմութիւնք։ զի երբ Աստուծով շինեցեն զեկեղեցիսն, որոյ անուամբ որ կառուցեն, նոյն եկեղեցեաց անօթն ի նմին եկեղեցին տացեն։ որպէս մեք արարաք, սուրբ Համբարձման և սուրբ Նիկողոսին և ալլոց։ Իսկ աւելեալ զգեստքն և արծաթեղէն և անօթքն և ոսկեղէն խաչքն զնելիք են ի սուրբ Լուսաւորիչ լուսազ եկեղեցին, ուր Առաջնորդարան է լինելոց։ Նոյնպէս և ամենայն վանօրէից անօթն։ Եւ զորս ի զգեստոցն հնացեալ գտաք, շուրջաւք, շաղկիք, վարազոլր, քիւլիմք, խալիք և խալիչալք և ալլք, խորհրդով դատաւորացն ետուք տառապեալ աղքատաց և տնանկաց։ Առաջին ամեն որք մերկք էին և ի ցրտով մեռանէին. զի և նոքա Աստուծոյ են, և Աստուած առայս ոչ երբեք բարկանալ, ալլ հաճի և ընդունի»։

ցուց, Բալուխուի ս. Յովհաննէսից, Աղ-Մէղղիի եկեղեցուց, Թամանի ս. Աստուածածնից, Գեօղլովի ս. Նիկողայոսից, Ղարասուրի ս. Փրկիչ վանքից, Հին-Ղրիմի ս. Խաչ վանքից և Օրհջալ եկեղեցուց: Եւ իմանալով, որ, բացի արկղներում եղածներէրէց, ուրիշ մասնաւոր մարդկանց ձեռքում էլ կան ձեռագրեր և ուրիշ եկեղեցական իրեղէններ, որոնք կամենալով սեփականացնել, իւրեանց լսօժար կամքով չէին կամենում բերել, հրամայում է նոցա բերել՝ որոնց լորդորելով, որոնց խնդրելով, որոնց էլ սպառնալով, և չաջողում է մի մասը ստանալ, իսկ միւս մասն ախպէս էլ մնում է մասնաւոր տներում թաղցրած և պահած և ժամանակի ընթացքում դառնում է մասնաւոր անձանց սեփականութիւն:

Գորանով էլ մեկնում է այն հանգամանքը, որ մինչև ցալսօր ևս մասնաւոր մարդկանց տներում գտնուում են հատուկօր դրչագրեր, որոնք անկասկած առաջ պատկանել են եկեղեցիներին: Որ Ղրիմից բերած եկեղեցական իրեղէնների և դորա հետ միասին և ձեռագրերի մի մասը մնացել է մասնաւոր մարդկանց ձեռքին, — ալդ երևում է այն մի քանի խօսքերից, որ արքեպիսկոպոսը մի երկու տեղ գրել է իւր ձեռագիրը «դաւթարում», որի մէջ նա մի մի ցուցակագրել է բոլոր իրեղէնները և ձեռագրերը <sup>2)</sup>: Կաֆալի Երաշխաւոր ս. Աստուածածին վանքի իրեղէնների ցուցակի տակ, օրինակի համար, մենք կարդում ենք «ի 1786 թուին և ի լուլիսի 20. դարձեալ լատնեցաւ դադազ Աւետիքի մօտ սուրբ Աստուածածին վանիցն, զոր Սիմէօն վարդապետն պահէ տուեալ նմա: և մեք հաստատեալ ի վերալ նորա, հաղիւ թէ՛ զներքոյ գրեալըն լատնեաց՝ լեա բաղում սուտ երդմանցո:

Երբ որ թէ քաղաքի և թէ գիւղերի եկեղեցիները շինուում, պատրաստուում են, արքեպիսկոպոսը նորն իշխաններին երկալութեամբ բաց է անում Հանդերձաստունը և ընտրելով իրեղէնների միջից նորերը, ընծալում է եկեղեցիներին, իսկ հները, եթէ արծաթեղէն է լինում, ջարդել է տալիս և գործածում եկեղեցու դարդարանքի համար, եթէ զգետեղէն, — ընծալում է աղքատներին: Ահա իհնց ալդ ժամանակն էլ նա

2) Ալդ ձեռագիրը «Դաւթար»-ը, որ մինչև վերջին ժամանակները գտնուում էր Տէր-Խաչատուր աւագ քահանայ Զարիֆեանի ձեռքում, ներկայումս դետեղուած է ի շարս միւս ձեռագրերի ս. Լուսաւորչի մատենադարանում:

ջուղում, հանում է միւս իրեղէնների միջից ձեռագրերը, մեծ մասը նոցանից առանձին արկղի մէջ հաւաքելով և դնելով աս. Լուսաւորչի պահարանը, փոքր մասը բաժանելով միւս եկեղեցիներին առձեռն գործածութեան համար, մի քանի ձեռագիր էլ ուրիշ տպագրուած եկեղեցական գրքերի հետ ուղարկելով Կարապետ վարդապետի ձեռքով Ղրիմ, որովհետև ալնտեղի եկեղեցիները, դաղթականների դուրս գալուց լիտու, բոլորովին դուրկ էին մնացել թէ եկեղեցական իրեղէններից և թէ գրքերից: Որ ձեռագրերից մի քանիսը Յովսէփ արքեպիսկոպոսը նորից ուղարկել է Ղրիմ, — այդ հանգամանքի մասին մենք նորա ձեռագիր «Կաթարում» կարդում ենք հետևեալ ծանօթութիւնը. «Թիւն 1783 սեպտեմբերի 25-ումն ներքոյ գրեալ զդետքն Կարապետ վարդապետին հառուք, որ տանի ի Կաֆայ սուրբ Սարգիս եկեղեցուն և սուրբ Խաչ վանիցն, երկու ձայնքաղ շարական պատմայ, երեք ատենի գրչաւ, երեք խորհրդատետր պատմար, և այլն:

Իւր լիշատակն էլ գաղթականների սրտում և Նախիջևանի տարեգրութեան մէջ անջինջ պահելու համար, նա ընդորում է ձեռագիր սուտարաններից մի-մի օրինակ, արծաթապատ է անել տալիս նոցա կամ իւր և կամ ուրիշ բարեպաշտ մարդկանց ծախքով և ընծալում է եկեղեցիներին, նախապէս նոցա լիբրայ գրելով կամ հետևեալ ընդարձակ լիշատակարանը. «Աս սրբոյ աթոռոյն Էջմիծանի ծալրագոյն նուիրակ ռուսաց երկրի ամենայն Հայոց աղգին Առաջնորդ, Նոր-Նախիջևանայ հիմնադիր և երանելի սուրբ Սիմէօն հայրապետին երևանցույ ձեռնասուռն աշակերտ Սանահնեցի Արղութեանց շիօշբէգի որդի՝ Յովսէփ ապարդիւն արքեպիսկոպոս, սուրբ աւետարանն այս՝ արծաթապատ առնել հառու իմով սեպհական արգեամբ ե նուիրեցի ի դուռն Նախիջևանու ս. Լուսաւորիչ աւագ եկեղեցուն, զոր ես հիմնարկեցի ի 1783 թուին Փրկչի և մեր ՌՄՂԲ ի սեպտեմբերի 9, ի տօնի Նիկիու սուրբ ժողովուն: Վալելոզքդ՝ լիշեցէք զաշխատաւոր անձն իմ և զծնօղա՝ զշիօշբէգն և զսպանեալն լանօրէն լաղկեացն ի տարապարտուց և զպարկեշտադնաց մալր իմ քէթէվան տիկինն՝ և դհանդուցեալ եղբարս և զքորս իմ զմովսէսբէգն, զփարսադանն և զմարիամն և զկենդանի եղբարս և քորս իմ զպարոն բէթաբէգն և զՌուսուդանն և զայլ աղգալինս իմ և զերիաարսն: Իշողքդ՝ լիշեալ լիջիք ի Քրիստոսէ: Գրեցաւ

ի 1783 թուին Փրկչի և ի հոկտեմբերի 27 ի Նոր-Նախիջևան», կամ հետևեալ կարճառօտ ծանօթութիւնը. «Յովսէփ Արքեպիսկոպոս շնորհեցի Նոր-Նախիջևանի ս. Կուսաւորիչ եկեղեցւոյն զսուրբ աւետարանս 1793. նոյ. 30-ին» և կամ երկուսը միասին <sup>2)</sup>։

Երջանկալիչատակ արքեպիսկոպոսն այդ իւր հաւաքած ձեռագրերի երկու տեսակ ցուցակն է թողել մեզ՝ մէկը Ղրիմից բերած թուր եկեղեցական իրեղէններէ, որոնց մէջ և ձեռագրերինը ու սուրբուած գրքերինը, միւսը միայն ձեռագիր մատենաներիւ Եթէ առաջին, ընդհանուր ցուցակի միջից մենք զատելու լինենք միայն որոշակի նշանակուած գրչագրերը, կտանանք հանդուցեալի ձեռքով ժողոված ձեռագրերի հետևեալ ցուցակը.

Հմր.	Տեսակները	Թիւ
1.	Ատուածաշունչ	6
2.	Աւետարան	94
3.	Յայտնաւորք	21
4.	Ճաշոց	19
5.	Մաշտոց	11
6.	Շարական	17
7.	Գանձարան	13
8.	Խորհրդատետր	9
9.	Կանօնագիրք	6
10.	Աղօթագիրք	3
11.	Նաղարք	6
12.	Ատենի (շարական)	6
13.	Սարգիս Շնորհալի	3
14.	Գանձք և ճառք (գրչեալ գիրք)	3
15.	Սաղմոս.	6
16.	Յովհաննու աւետարանի մեկ. Ոսկեբերանի	3

226 <sup>4)</sup>

Երկրորդ ցուցակը, որ, ինչպէս ասացինք, լոկ անխառն

<sup>2)</sup> Երջանկալիչատ. Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանի մի արդարեւ ընդարձակ լիչատակարանն էլ գրուած է ս. Ատուածածին եկեղեցու Սմբատ Գունդատարլին պատկանած աւետարանի կողքին։

<sup>4)</sup> Այդ թուի մէջ մենք հաշուել ենք և այն 8 ձեռագրերը, որոնց մասին «Գաւթարու» գրուած է «Տէր Թորոսի որդի պարոն Յովակիմի մօտ գոլ (գրչագիրք) Այսմաւորք—3, Ճաշոց—3, Շարական—2»։

գրագրերի ցուցակն է, ձեռագրերի թիւն ու տեսակը մեզ ներկայացնում է հետևեալ աղիւսակով.

Հմր.	Տեսակները	Թիւ
1.	Ճաշոց գիրք՝ մեծ և փոքր . . . . .	ԻԶ
2.	Այսմաւուրք՝ մեծ և փոքր . . . . .	ԽԱ
3.	Գանձարան՝ մեծ և փոքր . . . . .	ԺԳ
4.	Ատենի ժամագիրք և Ատենի շարականք	ԻԷ
5.	Մաշտոցք՝ մեծք և փոքերք . . . . .	ԺԹ
6.	Աւետարանք կոստողեալ և անկոստղք, մեծ և փոքերք . . . . .	ՄԵ
7.	Չորս հատ ճառ դիրք . . . . .	Դ
8.	Մէկ հատ արարածոց մեկնիչ վարդանայ	Ա
9.	Նրկու հատ գրչեայ Սարգիս գիրք, որ է կաթ. մեկ . . . . .	Բ
10.	Մէկ հատ Սաղմոսի մեկնիչ՝ Ներսիսի Լամբրոնացոյ . . . . .	Ա
11.	Կանոն գիրք. մէկն հոգ. դատարանումն է	Դ
12.	Գիրք մի լորում լորդորակին կաթուղի- կէից մեկնութիւն Սարգիս Ծնորճալ- ւոյն և ապա զնոյն ճառք ալ վարդապ.	Ա
13.	Տօմար և աշխարհացոյց . . . . .	Ա
14.	Խորհրդատեսւրք . . . . .	—
15.	Մէկ գեղեցիկ մագաղաթ. Աստուածաշունչ	Ա
16.	Մագաղաթ Աստուածաշունչ. . . . .	Ա

Այս դրացուցակի վերը գրուած է հետևեալ ծանօթու-  
թիւնը. «Ի դրիմու բերեալ ամենայն կեղեցական գրեանքս ի  
ներքոյ գրեմ, վասն տեղեկութեան ապագայ եկելոցդ և ի լի-  
շումն՝ աշխատանաց մերոց՝ լորոցդ հալցեմ լիշել զիս լաղօթս  
աստուածահաճօս՝ հանդերձ ծնօղօք և աշխատակցօք»:

Արդութեանի կազմած երկու ցուցակից ճիշդը, ի հարկէ,  
երկրորդը պէտք է համարել, որովհետև դա անխառն միայն  
ձեռագրերի ցուցակն է, իսկ առաջինի մէջ խառն են հինը և  
նորը, պէտքականը և անպէտքը, իսկ, որ գլխաւորն է, շատ  
տեղ գրքերի վերայ բոլորովին չի նշանակուած «դրչեար» և  
«տրամար» բառերը, ուրեմն և նորանով անկարելի է որոշել  
Ղրթմից բերուած և արքեպիսկոպոսի ձեռքով հաւաքուած ձե-  
ռագրերի իսկական, ճիշդ թիւը: Սակայն երկրորդ ցուցակն  
էլ կարելի է ճիշդ համարել միայն առաջին համեմատութեամբ  
և նորանով էլ կարելի է իմանալ ձեռագրերի թիւը ոչ ճշդիւ,  
ալ միայն մօտաւորապէս, որովհետև, նախ, լայտնի չէ, թէ

այդ ցուցակից որքան ձեռագիր է կարագետ վարդապետի ձեռքով նորից Ղրիմ ուղարկուել, և, երկրորդ, դորա մէջ «խորհրդատեորների» մօտ ոչ մի թիւ դրուած չէ, ալ միայն անորոշ կերպով գրուած է «խորհրդատեորք», չենք ասում արդէն այն, որ «Ատենի ժամագիրք» և «Ատենի շարական» գրուած են միասին և նոցա թիւը միասին որոշուած է «ի»», այնպէս որ դժուար է իմանալ, թէ իսկապէս որքան Շարական է եղել և որքան ժամագիրք:

## Բ

Ինչպէս կարելի է տեսնել վերոյիշեալ երկու ցուցակից, Ղրիմից բերուած և Յովսէփ արքեպիսկոպոսի ձեռքով հաւաքուած բոլոր ձեռագրերն էլ հոգևոր-եկեղեցական բովանդակութիւն են ունեցել և մեր լատինի պատմութիւնների ձեռագրերից դոցա մէջ չի եղել և ոչ մէկը: Այստեղ, ուրեմն, դարձեալ կրկնուել է այն ընդհանուր երևոյթը, որ մեր միւս պահանջուած ձեռագրերի մատենադարանների գլխաւոր լատիութիւնն է կազմում: Պահուել են միայն և գլխաւորապէս եկեղեցական գրքերը, իսկ աշխարհականների մեծամասնութիւնը կորել, ոչնչացել է: Ի՞նչ պատճառն էլ, ինչպէս լատինի է եղել ոչ միայն այն, որ եկեղեցական գրքերի աւելի կարօտութիւն լինելու պատճառով, նոցանից աւելի օրինակներ են արտագրուել, և կամ որովհետև հին Հալոց մատենադիրները մեծաւ մասամբ հոգևորական լինելով սիրել են տիրապէս և հոգևոր մատեաններ արտագրել ու հեղինակել, ալ և այն սրբութեան լարգանքը, որ տածել են մեր նախնիքը դէպի կրօնական մատեանները և այն խնամքը, որ նոքա տարել են նոցա վերայ, և, ընդհակառակն այն անհոգութիւնն ու անտարբերութիւնը, որ նոքա ցոյց են տուել դէպի մեր աշխարհական մատեանները:

Յովսէփ արքեպիսկոպոսը դեռ ինքը ձեռագրերի վերօրինեալ ցուցակները կազմելու ժամանակ նկատելով գրքերից մի քանիսի առանձին արժանիքը, ուշադրութիւն է դարձրել նոցա վերայ, իւր առաջին ցուցակում նոցանից մի քանիսի վերայ նշանակելով «հնագոյն» բառը, մի քանիսի վերայ—նոցա գրուելու ժամանակը, մի քանիսն էլ նա իւր երկրորդ ցուցակի տակը կարճաբոս կերպով նկարագրել է: Կա՞ֆալի

Երաշխատոր ս. Աստուածածին վանքից բերուած ութ աւետարանը բնորոշուած է «գրչեալ աւետարանք հնազոյնք» բառերով, նոյն վանքից բերուած երեք աւետարանի մօտ գրուած է. «Գրեալ ի ՈՁԹ. Հալոց»։ Երկրորդ ցուցակում նշանակուած Աստուածաշունչներից առաջինը նա հետևեալ կերպով է նկարագրուած. «Մէկ զեղեցիկ մարդաթեալ Աստուածաշունչ բոլոր գրով զեղեցկանկար պատկերօք և ոսկետուպ ծաղկօք և զանազան երանգօք, իբրև զերկրորդ դրախտ զարդարեալ։ Կաֆալու սք. Սստուածածին վանիցն էր լիշատակ վարդանալ եպիսկոպոսին, որոյ լիշատակն օրհնութեամբ եղիցի ընկալեալ մեր ընդ ալլ զգեստուց, եղաք ի հանդերձատունն ի մէնջ շինեցեալ, և նուիրեցաք սք. Լուսաւորիչ առաջ եկեղեցւոյն Նախիջևանու»։ Երկրորդի համար նա գրուած է. «Մարդաթեալ Աստուածաշունչ ևս Ղրիմու սք. Խաչին, որ է լուսահողի Յովհաննէս վարդապետին Սեբաստացւոյ շինողին նոյն վանից։ Գրեցաւ ի գուռն սք. Խաչին Հալոց ի Ռ'ի-ին»<sup>5)</sup>։

Թէ Բնչ են լինում և Բնչպէս են պահուած ձեռագրերն եկեղեցիների պահարաններում Յովսէփ արքեպիսկոպոսից լետով—, լալանի չէ, բայց ի նկատի առնելով մեր հաւաքած հատուկտոր անեղկութիւնները և նոցա ներկալ գրութիւնը ու պահուելու եղանակը, չի կարելի ասել, թէ նոքա այդ դէպքում ևս բացառութիւն են կազմում մեր միւս տեղերի եկեղեցիների և վանքերի պահարաններում գտնուածներինց. Պահարաններում գրուած ձեռագրերի արկղները վակուած չեն լինում, չխօսելով կանոնաւոր ցուցակագրութեան մասին, նոքա մինչև անդամ հասարակ կերպով էլ ցուցակագրուած չեն լինում, ալնպէս որ լալանի չի լինում, թէ որ եկեղեցին որքան և Բնչ ձեռագրեր ունի, որից և առաջ է գալիս ալն ցաւալի հանգամանքը, որ եկեղեցու պաշտօնեաները, մինչև անդամ և օտար մարդիկ ցանկացած ժամանակ անարդելք բաց են անում արկղները, երբում են ձեռագրերը, առն են արանում և երկար ժամանակ իւրեանց մօտ են պահում. Դորա հետևանքն

<sup>5)</sup> Ներկայումս ոչ թէ չկան այդ երկու Աստուածաշունչը, ալ և չկալ ոչ մի Աստուածաշունչ, բացի մի թերի օրինակից, որ գտնուում է ս. Խաչ վանքում։ Այդ թորի Աստուածաշունչը, որ մանր բոլորագրով գրուած մի ընտիր օրինակ է, ս. Էջմիածնի միաբան արժ. Մեսրոբ վարդապետի խնդիրքով պիտի ուղարկուի ս. Էջմիածնի մատենադարանը։

էլ հասկանալի է, թէ ինչ է լինում Արկղների լաճախակի քաց մնալու պատճառով, մուկն է դիպչում զբերին, ցեցն է ուտում, փոշին է փճացնում, պահարանների խոնաւութիւնից ձեռագրերը թացանում են և նոցա թերթերը կպչում միմեանց, մագաղաթը դեղնում է, սեանում է և գրի թանաքը լուծւում, խառնում և գրուածքն անընթեռնի դառնում, չենք պսում արդէն, որ տուն տարուածները այլ ևս չեն վերադարձնում, և եթէ վերադարձնում էլ են, նախապէս քրքրում են նոցա, պոկում են պատկերները, հանում են վերալից արծաթէ դարդերը, աղտոտում են չիշատակարանները, կամենալով իւրեանց անարժան մրոտումներն էլ նոցա մէջ խառնել, նոցա կողքին դրել, և ալլն և ալլն:

Մեզ մատնացոյց արին, օրինակի համար, քաղաքիս ս. Աստուածածին եկեղեցու քահանաներից մէկի վերայ, որ մի ժամանակ տիրացու է եղել ս. Լուսաւորիչ եկեղեցում: Կա, այդ հալ եկեղեցու պաշտօնեան պոկել, տուն է տարել ընտիր ձեռագրերի մէկի միջից Լեոն Երրորդի պատկերը և իբրև դարդ կախել է իւր բնակարանի պատից: Տեղիս երիտասարդներից մէկը հազիւ կարողացել է զանազան խորամանկ միջոցներով լստ առանալ պատկերը և նորից զետեղել ձեռագրի մէջ: Մենք մէկ օր պատահեցինք այդ քահանային և հարցրինք նորա գործած այդ վանդալականութեան մասին: «Տէր, Հայր, ասացինք մենք, ինչպէս է եղել, որ դուք ձեռագրի միջից պոկել, հանել էք Ռուբինեանց թագաւորի պատկերը և այդպիսով փճացրել էք և՛ ձեռագիրը և հազուադիւս պատկերը»: «Աղբար, պատասխանեց նա մեզ իւր աղճատ բարբառով, ո՞վ գիտէր այն ժամանակները զոցա զինը և արժէքը: մենք ձեզ պէս ուսումնական չենք, որ այդպիսի բաներ հասկանանք, ձեռագրերի պէս հնութիւնները զնահատենք: Գրքերը թափուած էին խորանի լստերը, ո՞վ կուզէր, կնալէր, ո՞վ կուզէր, տուն կտանէր, ո՞վ էր նոցա վերալ ուշադրութիւն դարձնողը: Տեսաք այդ գիրքը—ախրէթներ» կալին մէջը. այդ պատկերին հաւանեցի, որովհետեւ միւսները սուրբերի պատկերներ էին, իսկ այդ մէկը—թագաւորի: Առաւ, կտրեցի, բայց ոչ առանց թողլուութեան: Լուսարար Հաջի-Գրիգորին խընչքեցի, նա էլ թող տուեց. »<sup>0</sup>): Բացառութիւն են կազմում

<sup>0</sup>) Թէ ինչպէս դժուար է լինում առնել այդ պատկերը

միայն արծաթապատ աւետարանները, որոնք իբրև նիւթական արժէք ունեցող բաներ պահոււմ են եկեղեցիների միւս արծաթեղէնի հետ վիակ արկղներում, երէցփոխանների վաստաներում: մասամբ բացառութիւն է կազմում և ս. Լուսաւորչի ձեռագրերի հաւաքածուն, որ երկար ժամանակ միւս եկեղեցիների ձեռագրերի վիճակին ենթարկուած մնալուց լետոյ, հաւաքուելով մի տեղ, առաջ շարոււմ են մոմատանը շինած բաց դարակների վերալ, լետոյ արդէն ամփոխոււմ են ներկայումս նոյն մոմատանը դրուութիւն ունեցող ընդարձակ, շքեղ պահարանի մէջ:

Մի ընդհանուր ճիշտ ցուցակ, բացի Արղութեանի կազմած ցուցակից, Նոր-Նախիջևանի ձեռագրերն երբէք չեն ունենում: Ոչ թէ մի ընդհանուր ցուցակ, այլ և մասնաւոր ցուցակներ էլ գոյութիւն չեն ունենում, այնպէս որ երբ 1845 թուին երջանկալիշատակ Ներսէս կաթողիկոսն այցելոււմ է Նախիջևանը և կամենում է իմանալ, թէ եկեղեցիներն ինչ իրեղէններ ունին, բոլորեքեան մոլորոււմ են և ստիպուած են լինում խոստովանել, թէ ալղախի ցուցակներ չկան: Այն ժամանակ կաթողիկոսը զարանալով, հրամայոււմ է իւրաքանչիւր եկեղեցու դասաղլուխ քահանային անյապաղ կազմել ալղախի ցուցակ և իրեն ներկայացնել: Աւագերէցները սարսափած վեհի սպառնալիքից, ձեռքներից եկած միջոցները գործ են դրնում և շտապով կազմելով իւրաքանչիւրն իւր եկեղեցու իրեղէնների, որոնց մէջ և եկեղեցուն պատկանած ձեռագրերի ցուցակը, ներկայացնում են նորան: Նա էլ ալղ բոլորն աչքի անցկացնելով, վաւերացրում է նոցա իւր ստորագրութեամբ և լանձնում է ալղ ժամանակ իւր նշանակած ընդհանուր երէցփոխ կամ վէքիլ Յարութիւն աղա Խալիբեանի և աւագերէցների պահպանութեան, նախապէս հրամայելով, որ նոքա ևս վաւերացնեն նոցա իւրեանց ստորագրութեամբ:

քահանայից, — ալղ երևում է այն հանգամանքից, որ լիշեալ երիտասարդը ստիպուած է լինում լալանել ալղ մասին Նախիջևանի ալղ ժամանակուալ լաջորդ հանդուցեալ Կիւրեղ վարդապետին, որ իւր կողմից ալղ մասին լալանում է հէնց ալղ ժամանակները Նախիջևանում գտնուած Նախիջևանի և Բեասարբիոյ թեմի առաջնորդ Գրիգոր եպիսկոպոս Սագինեանցին: Փահանջն հրաւիրում է լաջորդարան և օտիպմամբ աւնում է նորանից պատկերը:

Մեզ լաջողուեց հողեր կառավարութեան հին գործերում գտնել այդ ցուցակները, աչքի անցկացնել լատկապէս նոցա ձեռագրերի մասը, համեմատել նոցա թիւը և տեսակները ներկայումս եկեղեցիներում եղած ձեռագրերի և թուր ու տեսակների հետ, և պէտք է խոստովանենք, որ միանգամայն հիասթափուեցանք: Բանից դուրս եկաւ, որ դոքա, այդ ցուցակները ոչ մի արժէք չունին: Եւ ուրիշ պէս լինել էլ չէր կարող: Մի արդպիսի շտապով կատարուած գործ, այն էլ ձեռագրերի ցուցակ կազմելու գործ, որ պահանջում է բաւականին երկար աշխատանք և հմտութիւն, կանոնաւոր ու ճիշտ լինել էլ չէր կարող: Նախ և առաջ ս. Լուսւորչի և ս. Նիկողայոսի իրեղէնների ցուցակներում նոցա ձեռագրերի ցուցակներն ամեննին չկան, որ մի մեծ պակասութիւն է, որովհետեւ ձեռագրերի ամենամեծ մասը գտնուում են հէնց այդ եկեղեցիներում, միւս եկեղեցիների ցուցակների ձեռագրերի մասն էլ վերին աստիճանի անկատար ու անկանոն են կազմուած: Այստեղ հարկաւոր ենք համարում նկատել, որ կանոնաւոր ցուցակ ասելով, մենք չենք հասկանում ու պահանջում, որ դոքա, այդ ցուցակներն այնպէս կազմուած լինէին, ինչպէս որ այժմ են միայն կազմուում, այլ, գոնէ, կանոնաւորապէս նշանակուած լինէին բոլոր ձեռագրերի անունները, նոցա Երբ, որտեղ ու որի ձեռքով գրուած լինելը և այլ այսպիսի տարրական տեղեկութիւններ:

Աւելորդ չենք համարում համեմատութեան համար գնել այստեղ այդ ցուցակները և դոցա համապատասխան եկեղեցիներում ներկայումս գտնուած ձեռագրերի տեսակները և թիւը, որպէս զի հեշտ լինի մեր ընթերցողներին գաղափար կազմել դոցա, այդ հին ցուցակների արժէքի մասին:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐ

Հին ցուցակ		Նոր ցուցակ	
Ս. Թորոս		Ս. Թորոս	
Աւետարան . . . . .	4	Աւետարան . . . . .	5
Յայտմաւորք . . . . .	2	Յայտմաւորք . . . . .	2
Ժամագիրք ատենի . . . . .	2	Շարական . . . . .	1
		Տօնացոյց և ժամագիրք . . . . .	1
		Մաշտոց . . . . .	2
		Սաղմոս . . . . .	1
		Ս. Գէորդ	
Աւետարան . . . . .	5	Աւետարան . . . . .	5

Յայտմաւուրք . . . . . 4	Յայտմաւուրք . . . . . 2
Ս. Համբարձում . . . . .	Ս. Համբարձում . . . . .
Աւետարան . . . . . 6	Աւետարան . . . . . 5
Յայտմաւուրք . . . . . 3	Յայտմաւուրք . . . . . 3
Գանձարան . . . . . 1	Գանձարան . . . . . 1
Ս. Աստուածածին . . . . .	Ս. Աստուածածին . . . . .
Գանձարան . . . . . 1	Աւետարան . . . . . 7
	Յայտմաւուրք . . . . . 2
	Շարական . . . . . 1
Չալիժըր գ. Ս. Համբարձում . . . . .	Չալիժըր գ. Ս. Համբարձում . . . . .
Յայտմաւուրք . . . . . 2	Յայտմաւուրք . . . . . 1
Մաշտոց . . . . . 1	Աւետարան . . . . . 1
Մեծ-Սալայ գ. Ս. Աստուածածին . . . . .	Մեծ-Սալայ գ. Ս. Աստուածածին . . . . .
Աւետարան <sup>1)</sup> . . . . . 1	Աւետարան . . . . . 1
Թոփտի . . . . .	Թոփտի . . . . .
Աւետարան . . . . . 2	
Փոքր-Սալայ . . . . .	Փոքր-Սալայ . . . . .
Սաղմոս . . . . . 1	
35	41

Սակայն որքան և անկատար և անկանոն կաղժուած լինեն ալք հին ցուցակները, այնուամենայնիւ զոքս մեզ համար շատ կարևոր ու հետաքրքրական են, որովհետև ցոյց են տալիս, թէ անխնամք պահուելուց 1845 թուից մինչև ցայսօր

<sup>1)</sup> Հողեր կառավարութեան ցուցակի մէջ նշանակուած Մեծ-Սալայ գիւղի ս. Աստուածածին եկեղեցու աւետարանի անաջ գրուած է: Գրեալ ձեռամբ Յոհաննիսի թուին հայոց 1103: Աերկալուսն աղբիւրի թուականով աւետարան չկալ Սեծ-Սալայի եկեղեցում: Կորա փոխարէն կալ մի կաշէպատ փայտէ կազմով թղթի վերայ գրուած բոլորագիր աւետարան, որ ունի հետեւեալ նօտրագիր լիշատակարանը. «Վերստին նորոգեցաւ քարաբուղին աղբիւրս եղեմալ և կաղմեցաւ ձեռամբ մեղսաներկ ժովաննէսի ի վալելուսն մանկանց սեռի. ի հայրապետութեան տեպոն Փիլիպպոսի ամենայն հայոց կաթուղիկոսի. և լարհիական եպիսկոպոսութեան լայսմ նառնդի տէր Գրիգոր արհի եպիսկոպոսի. և ի թվականութեան Հայոց ՌՃԳ (1654) ամիս Արդ ստացաւ սա ի հալալ ընչիցն... իւրոց Պէլիլիքն և եղ լիշատակ լանառիկն Սիօն և լիշատակ իւր հողալոյն և առն Մինասին և ալլն. և եղ զսուրբ աւետարանս ի դուռն սուրբ Աստուածածնին լիշատակ անջնջելի ի Սովուս չորալս գիւղն»:

Քնչ տեսակ և որքան փոփոխութիւն է առաջ եկել համապատասխան եկեղեցիներում պահուած ձեռագրերի թուի և տեսակների մէջ:

Մի երկու անգամ թուլ փորձեր են եղել միայն ս. Լուսաւորչի ձեռագրերի ցուցակը կանոնաւոր կերպով կազմելու, բայց երկու անգամն էլ փորձն անաջող է եղել և ցուցակները թերի են մնացել: Առաջին փորձ անողն եղել է ս. Լուսաւորչի միաբան քահանայ Տէր-Սարգիս Ոսկերչեանը, որ ցուցակազրել է միայն քառասուն ձեռագիր: Երկրորդ փորձ անողն եղել է տեղիս զպրանոցի ուսուցիչ պ. Արքաւամ Զափնեանը, որ սակայն ցուցակազրել է միայն քսան ձեռագիր: Այդ փորձերի անաջողութեան դիտարկ պատճառը, նախ, Նախիջևանի եկեղեցիների խոնավութիւնն է ընդհանրապէս և մասնաւորապէս ս. Լուսաւորչի խոնավութիւնը, որ միանգամայն արգելում է երկար ժառանակ պնտեղ պարապելը, երկրորդ, ձեռագրերի թուի բաղմութիւնը, որ շատ երկար ժամանակուաւ և մեծ աշխատանքի գործ լինելով, եթէ չստանք անկարելի ու վեր է մի մարդու ուժերից, զոհէ, շատ ու շատ դժուար է: Անհրաժեշտ է, որ այդ կարևոր գործը կատարուի մի քանի գործին հմուտ մասնագէտների ձեռքով և, որ զըլխաւորն է, պէտք է նախապէս այդ աշխատանքի համար ձեռագրերն եկեղեցիների պահարաններից հանելու, աշխատողների մէջ բաժանելու և տուն տանելու թուլութիւն ու ձեռնաւութիւն լինի <sup>8)</sup>:

<sup>8)</sup> Իսկ որ ամենակարևորն է,—պէտք է հոգ տանել, որ շուտով բոլոր ձեռագրերը հաւաքուեն ս. Լուսաւորչի, որ իբրև մայր-եկեղեցի գործ համար բոլոր յարմարութիւններն ունի —և տեղ և՛ շքեղ պահարան: Կորանով, նախ, ձեռագրերն ապահով կըլինին կողոպտուելու եսթարկուելուց, որովհետև ս. Լուսաւորչը շինուած է քաղաքիս միջավայրում և համեմատաբար աւելի լաւ է պահպանուած, քան թէ միւս եկեղեցիները: Երկրորդ, մեծ դիւրութիւն կլինի հարցասէրների և պարագլուղների համար: Եւ այդ անելը մի դժուար բան չէ, որովհետև արդէն իսկ ձեռագրերի մեծ մասը գտնուած է ս. Լուսաւորչի մատենադարանում: Կմնալ, ուրեմն, մի փոքր մասը, որ սրբազան առաջնորդի մի հրամանով կարելի է հաւաքել-բերել մայր-եկեղեցին: Այդ մասին մենք խնդրել էինք թեմիս նախկին կառավարիչ Տէր-Յուսիկ վարդապետից և Նախիջևանի նախկին լաջորդ Տ. Մխիթար վարդապետից: Այդ

Նախիջևանի ձեռագրերը նախել է հանդուցեալ Բժշկեա-  
նը, որ իւր ճանապարհորդութեան զրքի մէջ մտցրել է ս-  
Լուսաւորչի ձեռագիր աւետարաններից մէկի և Նխաւիթաւ-

մասին խնդրել ենք և Նախիջևանի ներկայ լաջորդ արժան.  
Մուշէ վարդապետից, և թէև ստացել էինք ու ստացել ենք  
դոցանից զրական պատասխան ու խոստումներ, բայց մինչև  
ցալսօր ևս այդ գործը մնացել է իւր առաջուպէ դրութեան  
մէջ: Նորերումս ս. Թորոս եկեղեցու կողմատուելը, որին զո՞-  
գնաց և այն արծաթապատ ձեռագիր աւետարանը, որ Նախի-  
ջևանի հիմնադիր Արղութեանն ընծայել էր այդ եկեղեցուն,  
ստիպողական են դարձնում այդ խնդրի փութով կարգադրելը:  
Ս. Թորոսում ձեռագրերն անկարգ կերպով թափուած են մի  
կտորած, բերանը բաց արկղի մէջ, որ դրուած է վերնատա-  
նը. միւս եկեղեցիներում, բացի ս. Լուսաւորչից, նոքա բաց  
թափուած են խորաններում միւս իրեղէնների հետ միասին  
և միևնոյն արծաթապատ աւետարաններն են, որ պահուած են  
երէցփոխների խոնաւ զկասաներում: Պարագողները, տես-  
նել ցանկացողները ստիպուած են պտոնել քաղաքի ու գիւղե-  
րի բոլոր եկեղեցիները, այստեղից-այնտեղից փոշու տակից  
հանել ձեռագրերը, աղաչել, խնդրել երէցփոխներին, որոնք  
արդէն ամեն անգամ չեն լինում եկեղեցիներում, որ ցոյց  
տան կասսաներում պահուածները: Հասկանալի է, ուրեմն, որ  
այսպիսի հանգամանքներում ոչ կարելի է ձեռագրերը կար-  
գին ուսումնասիրել, ոչ էլ ապահով լինել, որ նոքա չեն փտիլ  
խոնաւութիւնից կասսաներում, մկների ու ցեցի կերակուր  
չեն լինիլ խորաններում և սորա-նորա ձեռքով տուն չեն տա-  
րուիլ: Ինչ ասել կուզի, որ աւելի լաւ կլինէր, եթէ հնարա-  
ւորութիւն լինէր, բոլոր ձեռագրերը հաւաքել այս կողմերից  
և ուղարկել ս. էջմիածնի թանգարանը, կամ թէ հէնց այստեղ  
մալր-եկեղեցու մօտ մի փոքրիկ եկեղեցական թանգարան չի-  
նուէր և բոլոր հնութիւնները ձեռագրերի հետ միասին հա-  
ւաքուէր նորա մէջ: Բայց որովհետև մերներկայ հանգամանք-  
ներում այդ եթէ ոչ անկարելի, գոնէ, շատ դժուար է, ուստի  
և լարմարազոյն է վերօրինեալ միջոցի մասին մտածելը, վերո-  
լինեալը կարգադրելը: Ս. Թորոսի գողացուած արծաթապատ  
աւետարանը, որքան մենք լիշում ենք, գրուած էր մագաղա-  
թի վերայ Կաֆալում սառ ոտս սուրբ Թէոդորոսի զինաւորին»  
մանր բոլորագրով մի ոմն «քաղմամեղ և թերավարժ գրիչ»  
Վարդան երէցի ձեռքով Նահապետ կաթուղիկոսի և Ղրիմի  
առաջնորդ Յակովբ արքեպիսկոպոսի ժամանակ: Կորա կողքին  
դրուած էր Յովսէփ արքեպիսկոպոսի հետեւեալ համառօտ ըն-  
ծալականը. «չսուրբ աւետարանս շնորհեցի սուրբ Թորոս ե-  
կեղեցւոյն Նոր.Նախիջևանի Յովսէփ արքեպիսկոպոս 1793  
նոյ. 27»:

դիւղի ս. Կարապետ եկեղեցու նշանաւոր Յայտնաբերութեան Կոմիտէի պատմական իշատակարանները Ս. Լուսաւորչի ձեռագրերից մի քանիսի իշատակարանները արտագրուել և ուղարկուել են Պետերբուրգ պ. Եղեանին և հանգուցեալ Քերովբէ Պատկանեանին, որոնք իւրեանց Նախիջևանին արած այցելութեան ժամանակ աչքի էին անց կացրել ձեռագրերը և խնդրել էին ալդ մասին: Հալը Ղևոնդ Ալիշանի խնդիրքով Նախիջևանցի Եպիսկոպոս Պոպոյեանը 1883 թուին արտագրել է մի երկու աւետարանի իշատակարան և ուղարկել է Վենետիկ, նորն Ալիշանի խնդիրքով հանգուցեալ Քերովբէ Քուչնարեանը հարկանցօրէն քննել է ձեռագրերը և իւր քննութեան արդիւնքը հաղորդել է նորան <sup>9)</sup>: Ս. Լուսաւորչի

<sup>9)</sup> Հանգուցեալ Հ. Քերովբէ Քուչնարեանը, որ երկար ժամանակ պաշտօն է վարել Քէոզոսիայում, Մխիթարեանների լատուկ հետաքրքրութեամբ վերաբերուելով դէպի Ղրիմի, մասնաւորապէս դէպի Քէոզոսիայի հայկական հնութիւնները կազմել է Կաֆայի Հալոց պատմութիւնը: Ալդ պատմութիւնը, ինչպէս լատինի է, նախ, մաս-մաս տպագրուեց 1892 թուի Վաղմալէպում, լետոյ արդէն իւր, Քուչնարեանի դէպի Նոր Նախիջևան և Կամենեց-Պոդոլեան արած ճանապարհորդութեան նկատողութիւնների հետ միասին դուրս եկաւ առանձին գրքովիւ «Պատմութիւն գաղթականութեան Ղրիմու Հալոց» խորագրով:

Մեր ուշադրութիւնն ալդ պատմութեան մէջ գրուում են հանգուցեալ վարդապետի հաղորդած մի քանի տարօրինակ տեղեկութիւնները ու ծանօթութիւնները—(Կաֆա) անուան ստուգաբանութիւնը, նախիջևանցուց արտասանութիւնը և նիսուրիթացուց ոչ հալ արիւնից սերելու հանգամանքը: Հ. Քուչնարեանի կարծիքով Կաֆա—Capha անունն առաջ է եկել Հալոց «կաւ ա» խօսքից: Իբրև թէ Հալերն առաջին անգամ հասնելով Քէոզոսիոյ նաւահանգիստը, ցամաք դուրս գալով ու նկատելով քաղաքը և ծովափը շրջապատող կաւալին բլուրներն ու բարձրութիւնները, բացականչել են «կաւ ա», որից և առաջ է եկել ջանովացուց առողջանութեամբ «կաւ ա» ոճի կաֆա փոխուած ձևը: Հանգուցեալ վարդապետն իւր ալդ կարծիքը հաստատելու համար, բերում է երկու ապացոյց՝ մէկ որ կաֆա անունն առաջին անգամ լուում է պատմութեան մէջ Ժ դարում և Հալերն էլ հէնց առաջին անգամ սկսել են բնակութիւն հաստատել ալդ դարում և, երկրորդ, որ ջանովացիք Հալոց սև տառն արտասանելուս են եղել «ֆ» և տառադարձակուս են եղել ph բարդութեամբ:

Մեզ թւում է, որ սլա բանասիրական բացատրութիւնը,

ձեռագրերը, վերջապէս, տեսել է Օքսֆորդի ուսուցչապետ հալագէտ լատինի կոննիրէարը, որ 1886 թուին ս. էջմիածնից

հիմնուած է միայն «կառ ա» և կաֆա բառերի արտաքին ձևի նմանութեան ու նոյնանչիւնութեան վերաջ, ուստի և նախնաքան միամիտ ու ծիծաղաշարժ է, որքան և հանդուցեալ Ինճիճեանի դոյն օրինակ բանասիրական լատինի բացատրութիւնները: Բայց ինչ որ ներելի էր Ինճիճեանին, ի նկատի առնելով ժամանակը, նոյնն անկասկած ներելի չի կարող լինել Հ. Քուշնարեանին, որի ժամանակ (1892թ) բանասիրական դիտութիւնն այնպիսի մեծ քայլեր էր արել, որ արդէն խօսքերի ու ոճերի արտաքին ձևի նմանութիւնն ու նոյնանչիւնութիւնն ոչ մի տեղ չէր բռնում, ոչ մի խորհուրդ չուէր բանասիրական լատի հետազոտութիւնների մէջ: (Տես «Պատմութիւն գաղթականութեան Խրիմու Հայոց» Գլուխ Ը, էջ 112):

Հայր Քերովբէի կարծիքով կողիասից հրաւիրուած ուսուցիչները դասատուութիւն անելով Նոր-Նախիջևանից և նորագիւղերի դպրոցներում, աղաւաղել են նախիջևանցւոց արտասանութիւնը: Գուրս է դալիս, ուրիմն, որ նախիջևանցւոց արտասանութիւնն առաջ շատ լաւ է եղել և լետոյ միայն կողկասցի ուսուցիչների ազդեցութեան ներքոյ աղաւաղուել է: Փողնելով մի կողմ արևմտեան և արևելեան Հայերի արտասանութեան խնդիրը, որի լաւ կամ վատ լինելը մէկին կամ միւսին առաւելութիւն տալու տեսակէտից կախեալ է գուտ անձնական ճաշակից ու սովորութիւնից, մինք այստեղ չենք կարող մատնացոյց չանել հանդուցեալ վարդապետի վերոյիշեալ կարծիքի անհեթեթութեան վերաբ: Նախիջևանցւոց բարբառն իւր ոճաբանութեամբ, դարձուածներով, տառադարձութեան կանոններով ու բաղաձայների պառզանութեամբ պատկանելով Հայոց լեզուի արևմտեան ճիւղին և, բացի դորանից, ունենալով և իւր մանր-մունր առանձնալատկութիւնները, ինչպէս լատինի է, դասատուութեան համար ներկայացնում է մի քանի դժուարութիւններ, որոնց լաղթելու համար Հայոց լեզուի ուսուցիչները միշտ մեծ ճիգ ու աշխատանք են թափել: Նախիջևանցի երեխայի ականջը չի զանազանում լծորդ բաղաձայնների հնչիւնների տարբերութիւնը,—պէտք է հեղհեղէ ընտելացնել նորան դորան: Նախիջևանցի երեխան կանոնաւոր տառադարձութիւն անել ամենևին չ'զիտէ,—պէտք է նորան այդ հարկացնել: Նախիջևանցի երեխան Մարտիրոս անունն արտասանում է Մայտիրոս, Փաղէոսը—Փաղիոս, Ղևոնդը—Սևոնդ, Ղազարը—Ղազարոս—Խազար, Խազարոս,—պէտք է նորան այդ սովորեցնել: Նախիջևանցի երեխան չ տառը արտասանում է ժպեւ այլն շատ մանր ու խոշոր բաներ, որոնց մըայն ծանօթ են այն ուսուցիչները, որոնք երկար ժամանակ զործ են ունեցել Նախիջևանցի երեխաների հետ: Այժմ հայր Քերովբէի կար-

վերողանալիս, մի քանի օր մնաց նախիջևանում և այլքի անցկացրեց ձեռագրերից մի քանիսը «Էստամպածով» հանելով

ծիրով կողկասցի ուսուցիչները սովորեցնելով նախիջևանցի երեխաներին «իժեք» ի տեղ գրել ու արտասանել «երեք», «պալել»-ի տեղ «պահել», «սպաննել»-ի տեղ «սպանել», «գոպ»-ի տեղ «սուգ», «զրջել»-ի տեղ չրջել, «Պետրոս» ուսուցիչն «Յեքրոս» չտառադարձնել և այլն, դորանով ազդարեղ ու աղաւաղում են նախիջևանցւոց «մաքուր», սգեղեցիկ արտասանութիւնը — դորա դէմ մենք բան չունինք ասելու, որովհետեւ կրկնում ենք, այդ մի դարհուրելի անհեթեթութիւն է։ Սեւեռտու հայր Քերովբէն արեւելեան դրական լեզուն կոչում է «նորանար», իսկ Նախիջևանի բարբառը — «ստամանիկ»... (Տես «Պատմութիւն դաղթականութեան Խրիմու Հայոց»՝ Կրուկ Բ., էջ 39—41.)

Հայր Քուչնարեանը նշանակութիւն տալով Նիսութայ գիւղի ծերունի և հիւանդոտ Տէր-Յովհաննէս քահանայի ասածներին, արձանագրել է իւր պատմութեան մէջ իբրև մի հաւաստի փաստ, թէ Նիսութացիք հայ չեն, այլ քրիստոնէութիւն ընդունած նոդալ թաթարներ։ Զարմանում ենք, երբ և ինչպէս են այդ մահճեղական նոդայները հալաղաւան քրիստոնեակ դարձել։ Թաթարների արշաւանքի ժամանակ Հայաստանում ալք անկարելի էր, Անեցիների գաղթելու և Ախուարչում թաթարների մէջ ապրելու ժամանակ նոյնպէս անկարելի, Ղրիմում նամանաւանդ անկարելի։ Միթէ կարելի է կարծել, որ Ղրիմի խաների իշխանութեան ժամանակ նոյն իսկ Ղրիմում կարող էին մահճեղական նոդայները հաւատաւորս լինել։ Ակներև է, որ Նիսութայի քահանան բարկազսած լինելով իւր հօտի վերայ, դանդատուել է հայր Քուչնարեանին գիւղացւոց վերայ, և նորա արած հարց ու փորձին ժողովրդի մասին, «նոդայ» է կոչել նոցա, ինչպէս որ սովորութիւն կա Նախիջևանում ամեն մի կոպտութիւն ու անբաղաքավարութիւն նոդայութեան անունով կոչել, իսկ հայր Քերովբէն այդ բոլորը հալած իւղի տեղ ընդունելով, պատմութեան նիւթ է շինել։ Առհասարակ Ախթարեանք հաւաստի, քննական պատմութիւն գրել երբէք չեն իմացել։ Հայր Քերովբէ Քուչնարեանը Մխիթարեան վարդապետ էր։ (Տես «Պատմութիւն գաղթականութեան Խրիմու Հայոց»՝ գրուկ Բ., էջ 60—63.)

Զենք կարող վերջապէս ուշադրութիւն չդարձնել հայր Քերովբէի պատմութեան և մի կէտի վերայ, որ նոյնպէս շատ բնորոշ է Մխիթարեանների համար։ Վարդապետս իւր պատմութեան «Ուխտագնացութիւն ի Կամենից Փոտոլեան» գլխի մէջ խօսելով Լեհահայոց լեհանալու մասին, դորա զլխաւոր պատճառը համարում է Հայերի իւրեանց ազգային լեզուն

նոցանից մէկի կողքին գտնուած ու կաղմի համար գործածուած թերթի ասորական թէ կըրական ձեռագրի մի հատուած <sup>10)</sup>։

կորչելը և անխտիր խնամութիւն անելն իշխող տարրի հետ և ոչ թէ գաւանափոխ լինելը, ինչպէս սովորութիւն եղած է ընդունելու ինչ սակ կուզի, որ մեծ անբարտութիւն է մի հասարակութեան համար իւր ազգային լեզուն կորցնելը և անխտիր խնամութիւնից չխորշելը, բայց մենք իսպառ համաձայն չենք հանգուցեալ վարդապետի հետ, և դարձեալ մի անգամ էլ շատ ուրիշների հետ միասին կրկնում ու երեք կնում ենք, թէ լեհահայոց լեհանալու գլխաւոր պատճառն եղել է նոցա բռնի կերպով կաթոլիկ դարձնելը։ Նախ, մի ճշմարտութիւն է, որ հալը աւելի շուտ փոխում է իւր լեզուն, քան թէ իւր դաւանութիւնը, երկրորդ, անխտիր խնամութիւնը հետեանք է դաւանական անխտրութեան։ Քանի որ գոլութիւն ունի ազգային դաւանանքը, անխտիր խնամութիւնն էլ հալերի մէջ ալնպէս և ալնքան լաճախ չի պատահում, որ սպառնալ ազգութեան գոլութեան։ Մենք աւելին կասենք։ Լեհահայերն իւրեանց ազգային լեզուն կորցրած լինելով հանդերձ դեռ երկար, շատ երկար ժամանակ կարող էին հալ մնալ, ինչպէս որ դոյնպիսի հանգամանքներում մնացել ու մնում են և շատ ուրիշ հալ համայնքներ։ Ի՞նչու վերախօս չալերը վրացի չեն դառել ու չեն դառնում, ալն ինչ կաթոլիկ դարձած վերախօս հալերն իրենց հալ չեն համարում. քնշու թրքախօս ու թաթարախօս հալերը չեն կորչում մահմեդականութեան ոսկիանոսում, ալն ինչ Նրնջակ գուառի Ունիտորների աշխատանքով կաթոլիկ դարձած հայախօս հալերը ձուլուեցան մահմեդականների հետ. քնշու, վերջապէս, Հաշտարխանցի հայախօս կաթոլիկները միացան իշխող տարրի հետ, իսկ ազգային եկեղեցին պահպանողները մինչև ցարսօր էլ դեռ կան (Յեւ «Պատմ. գաղթակ. Խրիմու Հայոց» էջ 197—198.)

<sup>10)</sup> Պ. Կոննիրէարն իւր պատուական տիկնոջ հետ երեք օր մնաց Նոր-Նախիջևանում։ Նա աչքի անցկացրեց ու Լուսաւորչի մի քանի ձեռագրերը, շատ հաւանեց պատկերադարձ աւետարաններին, նամանաւանդ մի քանիսի գրութեան ձեւին։ Մենք արդ ժամանակ նկատեցինք, որ լարդելի ուսուցչապետը բաւականին վարժ կարողում էր ձեռագրերը, ալն ինչ նա շատ զգուարութեամբ կտրողանում էր գրել ու կարդալ ներկալում գործածական շեղագիրը։ Մենք նկատեցինք նոյնպէս, որ նա ձեռագրերի տառերի ձեւից լաջողութեամբ կարողանում էր գուշակել ձեռագրերի գրուելու ժամանակը։ Իր պարանոցի ուսուցչական խումբը ի պատիւ անդլիացի հալագէ-

Այդ վերջին այցելութիւնն անհետեանք չանցաւ ձեռագրերի պահպանելու և կարգի բերելու գործի համար: Այնպէս Վիկտորի վարչութիւնը, որ մինչև այդ ժամանակ բոլորովին բարձիթողի էր արել ձեռագրերը, ենթարկելով նոցա ցեցակեր լինելու և փոշուց ու խոնաւութիւնից փտելու վիճակին, տեսնելով, որ այդ աչքից ընկած մագաղաթներին այցելութիւն են դալիս մինչև իսկ հեռաւոր տեղերից օտարազգիներ, սթափուեց խոր քնից և ձեռքից եկած միջոցները գործ դրեց նոցա կարգի բերելու և խնամքով պահելու համար: Բաց դարակները և հասարակ տախտակների տեղ, որոնց վերայ մինչև այդ ժամանակ անկարգ կերպով թափուած էին ձեռագրերը, դրուեցան վերուիշեալ շքեղ ապակէզարդ պահարանները, ձեռագրերի վերալից տասնեակ տարիներով հաւաքուած փոշին մաքրուեցաւ, հնացած-անպէտք դարձած օրինակները հանուեցան, դատուեցան, իսկ մաքուրները, անաղարտ մնացածները կարգով շարուեցան պահարանում, և ալլն և ալլն <sup>11)</sup>:

**Ե. ՇԱՀԱԶԻՁ**

(վերջը միւս անգամ)



տին մի երեկոյ ընթրիք սարքեց դպրանոցի փոքրիկ պարտէզում և պատուեց նորան հալկական խորովածով: Ընթրիքի ժամանակ Ֆրանսերէն և հայերէն դրաբաւ ճառեր արտասանուեցան, որոնց բնագրերը խնդրեց և իւր հետ տարաւ մեծապատիւ հիւրը:

<sup>11)</sup> Այդ հնացած ու անպէտք դարձած ձեռագրերի հատուկտորները հաւաքած մի արկղի մէջ պահոււմ էին մինչև վերջին ժամանակները եկեղեցու վերնատանը: Ներկայումս այդ արկղն այլ ևս չկայ, չգիտենք թէ՛ն է եղել: